ՀԱՍՏԱՏ ԿԱՆԳՆԵԼ՝ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՎ ՀԱԿԱՌԱԿՈՒԹՅԱՆԸ

(ՆԵԵՄ. 4:1-23)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հով. 5:39-40 - *39 Քննեցէք **գրքերը** որ դուք կարծում էք թէ նորանցով ունեք հավիտենական կեանք, <u>եւ նորանք են որ ինձ համար վկայում են</u>: 40 Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ, որ կեանք ունենաք:*

Նեեմ. 2:19 - *19 Եւ Որոնացի **Սանաբաղատը** ու Ամմոնացի ծառա **Տուբիան** եւ Արաբացի **Գեսամը** այս լսելով մեզ ծաղր արին եւ մեզ արհամարհեցին եւ ասեցին. Սա ի՞նչ բանէ որ անում էք. մի՞թէ ապստամբվում էք թագաւորի դէմ:*

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

רָפָה, Raphah Հուսալքությունը – 64 times in 45 verse
weaken, to be quiet, abandon, forsake, isolate

թուլանալ, լուռ մնալ, լքել, թողնել, մեկուսացված

Ezra 4:4 – Եզրաս 4:4
Եւ այն երկրի ժողովուրդը **թուլացնում էր** Հուդայի ժողովրդի ձեռքերը եւ խափանում էր նորանց շինելուց:

Then the people of the land weakened the hands of the people of Judah, and troubled them in building.

Հոբ 7:19 – Job 7:19
Մինչեւ ե՞րբ դու ինձ չես **թողնելու.** Չես **թողնելու** որ թուքս կուլ տամ:
Why won't you **leave me alone,** at least long enough for me to swallow!

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(Նեեմ. 4:1-23)

Ինչպես ենք մենք հակազդում հակառակությանը (Հուսալքությունը ու մեղադրանքին)
What is our Reaction to opposition

1 Եւ երբոր Սանաբաղատը լսեց որ մենք պարիսպը շինում ենք, **բարկացավ (angry)** եւ շատ
զայրացավ (furious) եւ ծաղրեց Հրէաներին. 2 Եւ ասեց իր եղբայրներին Սամարիայի զօրքի
առաջին եւ խօսեց թէ **Ի՞նչ են** շինում այս թշուառ Հրէաներն. **մի՞թէ** թոյլ կտան նորանց. **մի՞թէ**
զոհ են մատուցանելու. **մի՞թէ** այսօր վերջացնելու են. **կենդանացնելու են քարերը փոշուց**
դէզերից քանի որ նորանք այրուած են: 3 Եւ Ամմոնացի Տուբիան նորա կշտին էր եւ
ասեց. Եթէ նորանց շինածի վերա մի աղուէս էլ վեր ելնէ, նորանց քարի պարիսպն կքանդէ:

բարկացավ, զայրացավ, ծաղրեց, և մեղադրեց:

I. ԹՇՆԱՄԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԷՐ ՀՈՒՍԱԼՔԵԼ ՇԻՆՈՂՆԵՐԻՆ (ԽՍ. 1-3):
THE ENEMY'S ATTEMPT WAS TO DISCOURAGE THE WORKERS. (V.1-3)

Ի՞նչ են *շինում այս* ***թշուառ*** *Հրէաներն.* ***մի՞թէ*** *թոյլ կտան նորանց.* ***մի՞թէ զոհ են*** *մատուցանելու. մի՞թէ այսօր վերջացնելու են. մի՞թէ կենդանացնելու են քարերը փոշիի դէզերից քանի որ նորանք այրուած են: Եթէ նորանց շինածի վրա մի աղուէս էլ վեր ելնէ, նորանց քարի պարիսպն կքանդէ:*

Ո՞րն էր Նեեմիայի արձագանքը: Ինչպե՞ս դուք կվարվեք նման դեպքերում:
What was Nehemiah's response? What will you do in such times?

1. **Նեեմիան հակառակվում է հուսալքություն բերող հարձակմանը աղոթքով (խս. 4-5):**
   Nehemiah comes against the discouraging attack with prayer. (v.4-5)

   4 ***Լսի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած,*** *քանզի մենք արժանացանք արհամարհանքի ու թշնամանքի. նրանց նախատինքները շո՛ւռ տուր իրենց գլխին, մատնի՛ր նրանց իրենց գերեվարողների թշնամանքին,* 5 *Եւ մի ծածկիր նորանց անօրէնութիւնը, եւ նորանց մեղքը չջնջուի քո առաջին, որովհետեւ քեզ բարկացրին շինողների առաջին:* ***Նեեմիան առնվազը 8 անգամ աղոթեց Տիրոջը:***

   Նեեմիայի համար աղոթքը՝ առաջին աղբյուրն էր, ոչ թե վերջին միջոցը, որին կարելի էր դիմել:
   For Nehemiah, prayer was a first resource, not a last resort.

Հուսալքությունը՝ խիստ ազդեցիկ զենք է, որովհետև ինչ-որ իմաստով այն հակառակ է հավատքին: Հավատքը հավատում է Աստծուն, Նրա սիրուն և Նրա խոստումներին, իսկ հուսալքությունը փնտրում է վատագույնը և հավատում վատագույնին, և հակված է մոռանալու այն մասին, թե ո՛վ է Աստված և ի՛նչ է Նա խոստացել անել: –Դեյվիդ Գյուզիկ, –David Guzik

Discouragement is such a powerful weapon because it is somewhat the opposite of faith. Where faith believes God and His love and promises, discouragement looks for

and believes the worst – and tends to pretty much forget about who God is and what He has promised to do. –David Guzik

Prayer provides strength.

2. **Աշխատանքը շարունակվում է էլ ավելի մեծ ուժով (խս. 6):**
   The work continues in greater strength. (v.6)

*6 Եւ պարիսպը շինեցինք, եւ բոլոր պարիսպը շրջափակվեց մինչեւ կէսը. Եւ ժողովուրդը **սիրտ արավ** (քաջացան) գործելու:*

3. **Թշնամու մարտավարությունը աշխատանքի վրա հարձակվելն էր (խս. 7-8):**
   The Enemy's strategy was to attack the work. (v. 7-8)

   *8 Եւ ամենքը **միաբանուեցան** միասին, որ գան **Երուսաղէմի դէմ պատերազմեն** եւ նորան վնաս տան:*

   False unity. Our unity must be Christ center. Antichrist is a symbol of valse unity.

II. ԱՅԴ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՃՆՇՎԵՑ ԱՂՈԹՔՈՎ և ՀՍԿՈՒՄՈՎ (ԽՍ. 9):
THE ATTACK DEFENDED BY PRAYER AND WATCHING. (V.9)

*Բայց մենք **աղօթք** արինք մեր Աստուծուն, եւ **պահապաններ** դրինք նորանց պատճառով նորանց դէմ **գերեկ եւ գիշեր:***

1. **Աստված փնտրում է ինչ-որ մեկին, ով հաստատ կկանգնի Խրամատում:**
   God is looking for someone to stand firm in the Gap.

ՆԵԵՄԻԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒՆԵՐ՝ ՆԵՐՍԻՑ և ԴՐՍԻՑ (ԽՍ. 10,11):
NEHEMIAH HAD TWO CHALLENGES FROM THE INSIDE AND THE OUTSIDE (V.10).

2. **Մարտահրավեր դրսից.**
   հուսալքություն կար մարդկանց միջև, որովհետև աշխատանքը չափազանց շատ էր թվում (խս. 10):

   10 Եւ Հրէաներն ասեցին. Բեռնակիրների ուժը թուլացել է, եւ հողը շատ է. եւ մենք չենք կարողանում պարիսպը շինել:

3. **Մարտահրավեր դրսից.**
   թշնամիները հանկարծակի հարձակում էին ծրագրում (խս. 11):

   *11 Բայց մեր թշնամիներն ասում էին թէ Չիմանան եւ չտեսնեն մինչեւ որ մտնենք նորանց մէջ եւ նորանց **սպանենք** եւ գործը խափանենք:*

   Ի՞նչ բնույթի հարձակումներ եք դուք կրում: Դրանք գալիս են ներսի՞ց, թե՞ դրսից: Ի՞նչ մարտավարություն ունեք:

What is the nature of your attacks? Are they coming from inside or out? What is your strategy.

1 Կոր. 16:13 - *13 Արթուն եղէք, հաստատ կացէք հաւատքում. համարձակ եղեք եւ ուժովացէք:*

III. ՆԵԵՄԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱԿԱՌԱԿՈՒԹՅԱՆԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՆ ԷՐ (ԽՍ. 13-18):

NEHEMIAH'S RESPONSE TO THE OPPOSITION WAS TO ORGANIZE THE DEFENSE. (V.13-18)

1. **Եղեք զինված, պատրաստ և աշխատող (խս. 16-18):**
   Be armed, ready, and working (v. 16-18)

   16 Եւ այն օրից ի վեր իմ մարդկանց ***կէսը գործն էր գործում,*** *եւ նորանց կէսը* ***նիզակներն ու ասպարներն ու աղեղները եւ զրահներն էին բռնում.*** *եւ* ***իշխանները*** *Հուդայի բոլոր տան ետեւին կանգնել էին: 17 Պարիսպը շինողները եւ բեռնակիրները, որ բեռն իրանց վերա էին բեռնում, մէկ ձեռքով գործն էին գործում, իսկ միւս ձեռքը զէնքն էր բռնած: 18 Եւ շինողների ամեն մէկը սուրը մէջքին կապած գործ էր անում, եւ փողահարն իմ կողքին էր:* ***Now this is true unity.***

2. **Մարդիկ հագնում էին Աստծո ողջ սպառազինությունը:**
   Putting on the full armor of God.

   Եփ. 6:10-11 - 10 Այսուհետեւ, եղբայրներս, զօրացէք Տէրով եւ նորա զօրութեան կարողութիւնով: 11 Եւ Աստուծո սպառազինութիւնը հագէք, որ **կարող լինիք սատանայի հնարքներին հակառակ կենալ:**

   ճշմարտութեամբ *գօտեվորուած,* ***արդարութեան*** *զրահը հագած,* ***խաղաղության*** *ավետարանի պատրաստությունով,* ***հավատքի վահանն առէք,*** *Եւ* ***փրկության*** *սաղաւարտն առէք,* ***Հոգու սուրը՝*** *որ Աստուծո խօսքն է:*

   1 Թագ. 31:4-5 - *4 Եւ Սավուղն ասեց իր* ***(զենք կրողին)*** *կապարձակիրին. Սուրդ հանիր եւ նորանով ինձ խոցիր. Մի գուցէ այս անթլփատները գան եւ ինձ խոցեն, եւ ինձ ծաղր անեն. Բայց նորա կապարձակիրը չուզեց որովհետեւ շատ վախեցավ: Եւ Սավուղն առավ սուրը եւ ընկավ նորա վրա: 5 Եւ երբոր նորա կապարձակիրը տեսավ որ Սավուղը մեռավ, սուրի վրա ընկավ, եւ մեռավ նորա հետ:*

3. **Նրանք ծրագրում էին մշտապես պատրաստ պաշտպանություն ունենալ:**
   Plans are made to keep a ready defense.

   Նեեմ. 4:19-23 - *19 Եւ ես ասեցի իշխաններին եւ ոստիկաններին ու մնացած ժողովրդին. Այս գործը մեծ եւ ընդարձակ է. Եւ մենք ցրուած ենք պարսպի վրա միմիանցից հեռու: 20 Ուրեմն որ տեղ որ լսէք փողի ձայնը, այնտեղ ժողովուեցէք մեզ մօտ,* ***մեր Աստուածը պատերազմելու է մեզ համար:*** *21 Եւ այսպէս մենք գործը*

*գործում էինք. Եւ կէսը նիզակներն էին բռնած արշալոյսը ծագելուց մինչեւ աստղերի երեւալը: 22 Այն ժամանակ սա էլ ասեցի ժողովրդին. Որ ամեն մարդ իր ծառայի հետ գիշերը Երուսաղէմում մնա, որ գիշերները մեզ համար **պահապանություն** անեն եւ ցերեկը գործեն: 23 Եւ ես ու իմ եղբայրները եւ իմ ծառաները եւ իմ ետեւից եկող պահապան մարդիկ՝ ամենքս **մեր հանդերձները չէինք հանում,** բացի ամեն մարդ ջուրը ուղարկելուց:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հուսալքությունը՝ խիստ ազդեցիկ զենք է, որովհետև ինչ-որ իմաստով այն հակառակ է հավատքին: Հավատքը հավատում է Աստծուն, Նրա սիրուն և Նրա խոստումներին, իսկ հուսալքությունը փնտրում է վատագույնը և հավատում վատագույնին, և հակված է մոռանալու այն մասին, թե ո՛վ է Աստված և ի՛նչ է Նա խոստացել անել: –Դեյվիդ Գյուզիկ

Discouragement is such a powerful weapon because it is somewhat the opposite of faith. Where faith believes God and His love and promises, discouragement looks for and believes the worst – and tends to pretty much forget about who God is and what He has promised to do. –David Guzik